

փրշտակիչ գայլերը եւ ցրուած ոչխարները
 կը ժողովես մէկ հօտի մէջ, խաղաղարար՝
 եկեղեցիներու, որ քակելով թշնամութեան
 միջնորմը երկուքը կը միացնես, իմաստուն
 ճարտարապետ, վերականգնիչ տապալած ու
 կործանեալ Տաճարին Աստուծոյ, աղբիւր
 կենդանի ջրոյ, որ կ'ոռոզես ամուլ դաշտե-
 րը ծարաւի հոգիներու. ընձիւղ երկնային,
 սուրբ հայրերու վաղեմի սերունդէն սեռած,
 ի յաւիտենից որոշուած, եւ յետին ժամանա-
 կին ծնած, ճոխացնելու համար հայ եկեղե-
 ցին, այր լիովին առաքելաջան, երեւելի Ա-
 րեւելքի մէջ, աւելի նշանաւոր Արեւմուտքի
 մէջ, եւ ամէնուրեք դովեստներով ճոխա-
 ցած, նաեւ Մայր Քաղաքին մէջ, ծիրանա-
 ւոր իշխաններու Սրբազան ժողովին մէջ
 տարփողուած, ո՛վ երիցս եւ քառիցս երանե-
 լի, մանաւանդ երանի որովայնին, որ քեզ
 կրեց եւ ստինքներուն, զորս դիեցիր, որով-
 հետեւ հաւատքի մաքուր աչքով արժանա-
 ցար հասնիլ ճշմարտութեան, զոր մարմինն
 ու արիւնը չյայտնեցին Քեզի, այլ Նրկնա-
 ւոր Հայրը. ուրեմն թող ցնծայ Հայ Եկեղե-
 ցին, եւ նոր ուրբախութեամբ լի՝ սրբէ իր
 արցունքներն անցեալ տիրութեան, վասնզի
 երկարատեւ այրիութենէ յետոյ, առաջուան
 պէս հարսնացեալ՝ գտաւ իր սիրելի լուսա-
 ւորիչը: Դու, ո՛վ յարգելի եւ Նրկինքէն մե-
 զի տրուած Հովիւ, ջանա՛ որ Հարսիդ բարի-
 քին համար զՔեզ երկար ատեն ողջ առողջ
 պահես: Գիտցի՛ր սակայն որ, երբ մենք եւ
 քու հաւատարիմ ժողովուրդդ լսեցինք հոս